ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

---

« 07 » օգոստոս 2026թ. No 4544 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԳՐԱՆՑՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ) ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 2-ի 58-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 03/4128-26 առ 03.08.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդունել 1 դեղի հետգրանցումային փոփոխությունները (գրանցում պահանջող) համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, լիազոր մարմնի հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

4. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Восстановимая подпись

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Подписано: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի օգոստոսի «07 » - ի N 4544- Ա հրամանի

Հետգրանցումային փոփոխությունների (գրանցում պահանջող) ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Փոփոխության տեսակ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | IA և IB | Մենոպուր | մենոտրոպին | ղեղափոշի լիոֆիլացված մ/մ կամ ն/մ ներարկման լուծույթի | 75ՄՄ; (5) ապակե սրվակներ և (5) լուծիչ ամպուլներում 1մլ, (10) ապակե սրվակներ և (10) լուծիչ ամպուլներում 1մլ | Ֆերրինգ ԳմբՀ, Ուիթլանդ 11, 24109, Կիել- փոշու բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Ֆերինգ Ֆարմասյուտիկալս (Չինաստան) Քո., ՍՊԸ, Հույ Լին Լու (Ֆերինգ Ռոադ) 6, Առողջապահական տեխնոլոգիաների ազգային պարկ, 528437, Չժունգշան քաղաք, Գուանգդունգ նահանգ, Չինաստան - լուծիչի բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, Ֆերրինգ-Լեչիվա, ա.ս.(արեալ սպոլ. ԵՑՊ, ա.ս.), Կե Սկալե 455, Վեստեց ու Պրագի, 25250, Չեխիայի Հանրապետություն- երկրորդային փաթեթավորող | Գերմանիա | Ֆերրինգ ԳմբՀ, Ուիթլանդ 11, 24109, Կիել | Գերմանիա | Դ | 24347 31.07.2026 |